

ՀԱՐԱՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ



Պ. ՊԵՏՐԱՍԵՎԻՉ

ԴԱԶՏԱՅԻՆ ԳԱՀԱԿ

Ե Ր Ե Վ Ա Ն
1930



ՏՏ.ՏԻԿ . Պ. ՊԵՏՐԱՍԵՎԻԶ

ԴԱԺՏԱՅԻՆ ՊԱՀԱԿ

113574 1000000



ԱՅԿ. ԴԻՎ. ԲԱՂԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1930

Полевой караул
П. П е т р а с е в и ч

ՀԱՅԳՈՒԻԴՐԱՅ

Դրանկայվար 5173 ք.

Պատվ. № 2630

Տիրամ 2000

Հանգստի նշանակությունն ու անհրաժեշտու- թյունը գորգերի և նրա պահպանության համար	7
Անշարժ պահպանության դասավորության կարգը	17
Դաշտային պահակ	28
Ժամապահ	40
Ժամապահի ծառայությունը դաշտային պա- հակում	45
Դաշտային պահակի ծառայությունը	53
Գաղնիքները և պարեկներներն անշարժ պահ- պանության մեջ	67
Կապը դաշտային պահակում	72
Դաշտային պահակը հեծելագործի հանգստում կանգնած ժամանակ	75

10. Ի. ՊԵՏՐԱՍԵՎԻՉ. — «Գաշտային պա-
 իակ» գրքույկը նկարագրում է գաշտային պա-
 հակի ծառայութեան պարտականութեաններն և
 անանձնահատկութեանները հանգստացող զորա-
 մասի պահպանութեան ժամանակ: Գրքույկը
 կարմիր բանակայինի 1-ին տարվա ուսուցման
 համար և, բայց կարելի չէ ոգտադործել նա-
 խակոչիկի և տերխոտորխալիկի (յերկրայինի)
 1-ին հալաքի ժամանակ: Բացի այս գրքույկից,
 այդ հարցի մասին կարելի չէ կարդալ Գուրովի
 «Հետեակի պահպանութեանը յերթում» և Իվա-
 նովի «Հետեակի պահպանութեան» գրքույկնե-
 րը: Յերկու գրքույկներն եւ հարցին մոտենում
 են ավելի ընդարձակ և հասկացողութեան են
 տալիս այն մասին, թե ինչպէս և կազմակերպ-
 վում պահպանութեանն ընդհանրապէս, իսկ
 գաշտային պահակի մասին այնքան եւ մանրա-
 մասն չեն խոսում, ինչպէս ը. Պետրասեիչի
 գիրքը:



ՀԱՆԳՍՏԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՅԵՎ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՐԹԵՐԻ ՅԵՎ
ՆՐԱ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ .

Պատերազմում ամբողջ գործը վրձ-
ուում է մարտը: Ով մարտում ջարդել է
հակառակորդին, նա հնարավորություն
ունի առաջ շարժվելու և իր հաջողու-
թյունը դարձացնելու, գլուխ բերելու
նշված պլանը:

Բայց, մարտը տանելու համար, ան-
հրաժեշտ է մերձենալ նրան մոտիկ տա-
րածության վրա և տապալել նրան ձեռ-
նամերձ ավինազրոհում: Իսկ դրա համար
գործերը պետք է նրան գտնեն, մոտենան
նրան, ուրիշ խոսքով, գործերը պետք է
սովեն որ տեղաշարժվեն դեպի հակառա-
կորդի ուղղությամբ: Զորքերի այդ տե-
ղաշարժումները կրում են յերթային
շաբթումներ անունը, կամ պարզորեն—
յերթեր:

Յերթերը յերբեմն շատ յերկար են
լինում, յերբեմն էլ անցնում են անբա-

ընդամաստ պայմաններում—անձրևի, սաս-
տիկ ցրտի, ցեխի, շոգի միջով, վատ ճա-
նապարհներով: Այդ բոլորը խիստ հոգ-
նեցնում են մարտիկներին, թուլացնում
են դորքերի ֆիզիքական ուժն և նվա-
զեցնում նրանց մարտունակությունը:
Յերթի ժամանակ հոգնած մարտիկները
վատ կկռվեն, վորովհետև թշնամու հետ
մարտի բռնվելու համար հարկավոր
են ուժեղ և առողջ մարտիկներ:
Յերթի ժամանակ չափից ավելի
հոգնելուց խուսափելու համար, պետք
է միջոցներ ձեռք առնել վե-
րականգնելու մարտիկների թուլացած
ուժերը, հնարավորություն տալ նրանց
խաղաղ կերպով հանգստանալու: Ուստի
յերկար անցումներ անելուց հետո դոր-
քերին հանգիստ է տրվում, իհարկե, յե-
թե դրան չի խանգարում մարտական պա-
րագան և թշնամին՝ ինքը վրա չի տալիս:

Հանգստանալու և իրենց ուժերը վե-
րականգնելու համար, դորքերը սովորա-
բար տեղավորվում են բնակավայրերում
(չեներում, գյուղերում, քաղաքներում),
տներում և բնակարաններում: Յերբեմն

խնայելի տախարիւմը են հանգստի կանգնել
և բաց յերկնքի տակ, բայց դա սակաւ և
սլափառում:

Պատերազմում միշտ կարող են լինել
անսպասելի բաներ, պատահականու-
թյուններ. հակառակորդը չէ՞ վոր միշտ
ձգտում և այն բանին, վոր ան-
հանգստացնի հանգստում կանգնած
զորքերին և թույլ չտա նրանց խա-
ղաղ կերպով հանգստանալու: Այդ
բանը չպատահելու համար, հան-
գստացող զորամասերը պահպանում
են իրենց, դնելով այսպես կոչված, ան-
շարժ պահպանութիւն:

Ընդհանուր դրութիւնը պատերազ-
մում. զորքերն ինչ ել անելիս լինեն թե
մարտում, թե յերթում, միշտ իրենց
առջևում պետք և հետախուզութիւն ու-
նենան: Նույնպես ել և հանգստում: Հան-
գստացող զորքերի առջևում՝ բաւական
հեռու միշտ պետք և լինեն հակառակորդի
կողմն ուղարկված մեր հետախուզական
զորամասերը: Հանգստացող զորքերից
ավելի հեռուն—հեծյալ հետախուզու-
թիւն, ավելի մոտիկ—հետեակ:

Հետախուզությունը—ամենալավ պահ-
պանությունն է, վորովհետև նա մեծ մա-
սամբ գտնվում է հակառակորդի հետ
կապի մեջ, նրան պահում է իր մշտական
դիտողության տակ, տեղաշարժվում է
հակառակորդի տեղաշարժման հետևան-
քով և բաց է անում նրա դիտավորու-
թյունները: Իսկ հետախուզության յե-
տևից ել գնում է և անմիջական պահպա-
նության գիծը: Այդպիսով հանգստացող
զորքերը միշտ կունենան կարծես թե
պահպանության յերկու գիծ․ առաջինը—
հետախուզող զորամասերը, յերկրորդը—
անմիջական անշարժ պահպանությունը,
վոր գնում են հանգստացող զորքերը:

Անշարժ պահպանության գլխավոր և
միակ խնդիրն է—պահպանել հանգստա-
ցող զորքերին հակառակորդի հանկար-
ծակի վրա տալուց և հրետանական կրա-
կով հարվածելուց: Ուրեմն անշարժ պահ-
պանությունն ի՞նչ պետք է անի այդ
խնդիրները կատարելու համար:

Նա պարտական է.

1) Թույլ չտալ միավելու (մտնելու)
անշարժ պահպանության գծի մեջ հա-

կառավարողի մանր հետախուզական խըմ-
բակներ, վորոնք ճշելով-մտնում են մեր
հետախուզության միջով: Մեր զորքերի
մասին տեղեկություններ հավաքելուց
բացի, այդ խմբակները կարող են հան-
դրատալից զորամասերի վրա հանկարծա-
կի հարձակմամբ անհանդիստ անել նը-
րանց:

2) Կատարել հակառակորդի մերձա-
վոր և առջևում ընկած տեղանքի հետա-
խուզություն:

3) Յետ մղել հակառակորդի մանր
խմբակների հարձակումը:

4) Հակառակորդ խոշոր զորամասե-
րի հարձակման դեպքում բանդ անել նը-
րանց այնքան, վոր հանգստացող զորա-
մասերը հնարավորություն ունենան
պատրաստվել մարտի և ընդունել գոր-
ծողությունների վորոշ պլան:

Իր խնդիրը կատարելու համար ան-
շարժ պահպանությունն առաջ է շարժ-
վում դեպի հակառակորդն այնքան, վոր-
պեսդի վերջինս չկարողանա հրետանա-
կան կրակով գնդակոծել հանգստացող
զորքերին: Ուրեմն նա առաջ է շարժվում

մոտավորապես 3-4 կլմ. Հանդատացող
զորքերից առաջ:

Ինչպիսի նշանակութիւն ունի ան-
շարժ սրահպանութիւնն և ինչի յե հաս-
ցնում նրանում վոչ ճիշտ և անհոգ ծա-
ռայութեան կատարելը ցույց և տալիս
հետեյալ որինակը:

1919 թ. մարտի վերջերին Կարմիր
բանակի զորամասերը, վորոնք զործում
էին Դերալցեվո—Ջվերեվո կայարանի
(Յեկատերինյան յերկաթուղու) գծից
հարաւում, ստիպւած էին նահանջել.
Սպիտակները նեղում էին շատ խիտ:
Մարտի 30-ի առավոտյան մեր հրաճիղ
գնդերից մեկը, ասենք թեկուզ 37-րդը,
20 կլմ. յերթից հետո մոտավ Շտերովկա
կայարանին կից գյուղակն և ակզավոր-
վեց այստեղ հանգստանալու:


Հանգստացող զնդի սրահպանման
համար գրվեց անշարժ սրահպանութիւն
(գծանկար 14 եջում): Գրդ վաշտը—
յերկաթուղու ճյուղավորման մոտ, 4-րդ
վաշտը—կայարանից հարաւ—արեւելք յե-
ղած տնակների մոտ և 3-րդ վաշտը—
յերկաթուղու ասնիկի (буфта) մոտ:

Վաշտերից յուրաքանչյուրում կար 50
հրաձգից վոչ ավելի: Ուստի, գնդի տե-
ղավորությունից 1—1½ կլմ. առաջ
անցնելով նոքա կարող եյին դնել թույլ
պահպանող զորամասեր միայն. դաշտա-
յին պահակներ և պահակակետեր (պոս-
տեր): Մակայն Շտերովկայում տեղա-
փոխած գնդի յետևում, իմանովկա գյու-
ղում կանգնած եր ուրիշ, 38-րդ գունդը,
վոր անշարժ պահպանություն եր դրել
գյուղի հարավ-արևելյան կողմում: Այդ-
տեղ եր նաև բրիգադի շտաբը: Հակառա-
կորդի մոտին մեր զորամասերը վոչինչ
չգիտեյին, իսկ նրան կարելի չեր սպասել
ամեն կողմից: Մտռախուղ եր, անընդ-
հատ անձրև եր գալիս և առջևում 100
քայլի վրա վորևե բան տեսնել ան-
հնար եր:

Շտերովկայում հանդատացող 37-րդ
գունդը համարչա վոչ մի կապ չուներ իր
հարևանների հետ: Անընդհատ կռիվնե-
րում և յերթերում տանջված մարտիկ-
ները քնել եյին:

Մարտի 30-ի որվա կեսը հանդիսա
տնցավ: Բայց ահա ժամի 16-ին մոտ ա-

ընկելից, 3-րդ վաչախ կողմից, տրաքե-
ցին զնդացրերը, և Շտերովկայի փո-
ղոցներում սուլեցին զնդակները: Քնա-
թաթախ, չչմած անակնկալից հրաձիղ-
ները փախան ամեն կողմեր, և հրաձգու-
թյունն սկսվելուց մի քանի րոպե հետո
գլուղակի փողոցում մնացին մի քանի
թողած սայլեր միայն:



Գծանկար 12-րդ եջի որինսկի համար .

Փախչողներին մի մասը գնաց Ղեպի
Պետրովենկա, մյուսը—Ղեպի Իվանով-
կա, բայց գյուղերից դուրս գալիս ընկավ

սպիտակների գնդացրային կրակի տակ,
դարձավ ձախ՝ դեպի ձորակը: Հենց ձո-
րակում նրան բանդ արեցին սլաովիրակ-
ներն և գնդացրային խմբի սլետը, վորոնք
կարողացան վախճողներից առաջ անցնել:
Հաջողվեց գնդից հավաքել միայն մինչև
200 մարդ մեկ վաշտի հրամատարով: Սա-
կայն և այդ հավաքական զորամասն այն-
քան եր վախեցած, վոր առանց վորեւե
սլատճառի յետ քաշվեց ելի 10 կիլոմետր
դեպի հյուսիս և միայն այդ ժամանակ
հանդարտվեց: Գնդի մնացած մասերը
խմբակներով ցրվի յեկան հեռու թիկուն-
քում: Վերջում ստացվեց կարմիր մար-
տական ճակատի ճեղքում: Իսկ ի՞նչն եր
սլատճառ յեղել դրան:

Հետո դուրս յեկավ, վոր ամբողջ
խառնաչփոթությունն արել ե կազակնե-
րի հեծելադետքը, վոր այլեւի քան 40
ձիավոր՝ յերկու գնդացրով: Իսկ ինչո՞ւ
նրան այդ հաջողվեց: Վորովհետե ուղիդ
կարգավորված չեր և պահպանության
ծառայությունը ճիշտ չեր տարվում: Դը-
րա հետևանքով ել խորտակվեց վորպես
մարտական միավոր—ամբողջ գունդը,

իսկ յեթե հակառակորդը թվով այնպես
թույլ չլիներ, դործը կարող եր ավելի
վատ դառնալ:

Ահա և ուրիշ դեպք:

Դեպքը պատահել է 1918 թ. դեկ-
տեմբերին, Ուկրաինայում, խորհրդային
զորքերի Պետլյուրայի հետ ունեցած կռվի
ժամանակ: Ուկրաինայի խորհրդային
Բոգոմոնսկի գնդի 4-րդ վաշտի դասակի
հրամատարը հրաման ստացավ գնալ մո-
տակա գյուղերից մեկը հետախուզու-
թյան, իսկ յեթե հնարավոր է, անհա-
դիստ անել պետլյուրականներին: Դասա-
կի հրամատարը ջոկեց 15 ամենախիզախ
մարտիկների, վերցրեց Լյուխի գնդա-
յիրն և կապից յերկու ձիավոր և ուղե-
վորվեց: Մոտենալով գյուղին, նա հայ-
տաբերեց այնտեղ հանգստանալու համար
տեղավորված պետլյուրականներին և
պարզեց, վոր նրանք անշարժ պահպա-
նություն չեն դրել: Դասակի հրամատարն
իսկույն հարձակման սլանը կադմեց և
համարձակ ու վճռականաբար վրա տվեց
հակառակորդին: Պետլյուրական ամբողջ
ջոկատը 183 մարդով անձնատուր յեղավ:

Այդ եւ պատահեց միայն այն պատճառով,
վոր պետություններն անշարժ պահ-
պանություն չէին դրել: Յեթե նա դրված
լիներ, այն դեպքում չեր կարող դործն
այնպես համարձակ, արագ և հաջող
վճռվել:

ԱՆՇԱՐԺ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎՈ-
ՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ:

Անշարժ պահպանությունն ի՞նչպես
պետք է տեղավորված լինի, վոր կատար
ածի իր խնդիրը:

Մինչև զորամասերի հանգստյան տե-
ղին մոտենալը նշվում է այն գիծը, վոր-
տեղ ամբի լավ և դասավորել անշարժ
պահպանությունը, և նշանակվում է զո-
րամաս, վորը պետք է դնի այդ պահպա-
նությունը: Այդ զորամասն ընդունում է
պահապան ջոկատ անունը: Նայած նրան,
թե հակառակորդն արդյոք հեռու չէ, մեծ
և արդյոք ինքը զորամասը և վորքան և
անշարժ պահպանության համար նշանակ-
ված դժի յերկարությունը, դրանից եւ
կախված է պահապան ջոկատի ուժն և
քանակը: Պահապան ջոկատ են նշանակ-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԳԱՐԱՆ, ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱԳԱՐԱՆ, № 2

վում սովորաբար հանդստացող զորքերի քառորդից մինչև յերրորդ մասը:

Անշարժ պահպանությունը տանում է գլխավորապես հետևակը: Նրա վրա յե դրվում նրա ծառայության ամբողջ պատասխանատվությունը: Յերբեմն, յեթե պարագան այդ պահանջում է, պահապան ջոկատ նշանակվում է փոքր քանակով և հրետանի: Պահապան ջոկատում հեծելազոր նշանակվում է ամենաչնչին քանակով, և գլխավորապես կապի ծառայություն կատարելու համար:

Ընդունված է, վոր անշարժ պահպանություն դրվում է առաջավոր զորամասերից, վորոնք պահպանում են և յերթային շարժումը (առաջապահից): Յեթե հանդստացող զորամասը հետևակի գնդից քիչ է, այն դեպքում պահապան ջոկատ չի նշանակվում: Գունդը պահպանվում է հատուկ ձևով, վորի մասին կիսոսենք ցածում:

Պահապան ջոկատի պետը, ստանալով հակառակորդի մասին բոլոր տեղեկություններն ու ցուցմունքները, թե վորտեղ դնել անշարժ պահպանությունը, իր

ջուկի հետ միասին առաջ և շարժվում
ցույց տալով պահպանության գիծը: Այս-
տեղ տեղում ամբողջ գիծը, կամ ճիշտ և
տակ չներառ, վորը պետք և անշարժ պահ-
պանությունը բռնի, բաժանվում և տե-
ղամասերի, մոտավորապես ըստ պահա-
պան ջուկատում գտնված վաշտերի քանա-
կի: Ամեն մի վաշտի հանձնվում և պահ-
պանելու վորոշ տեղամաս: Այն տեղա-
մասը, վոր բռնում և վաշտը, ստանում և
վաշտի պահպանական տեղամաս անունը:

Վորովհետև հակառակորդին պատե-
տերազմում կարելի չե սպասել ամեն կող-
մից, ուստի պահպանական տեղամասը
գառավորվում են աշնպես, վոր հանգըս-
տացող դորքերի պահպանությունը լինի
վոր թե ուղիղ գծով, այլ շրջանաձև:
Պահպանական տեղամասի յերկարությու-
նը վաշտի համար կարող և լինել 1-ից
մինչև 3 կրճ. ճակատով:

Վաշտերի պահպանական տեղամասե-
րի վրա բաժանելուց հետո աղառ մնացած
բոլոր դորամասերը կազմում են պա-
հապան ոժանդակ: Այդ ոժանդակը
տեղավորվում և մոտավորապես պահ-

պանութեան պէժի մեջտեղի յետևում
և ծառայում և վորպես ոժանդակ
ամբողջ անշարժ պահպանութեան հա-
մար:

Վաչտի պահպանական տեղամասը,
իր հերթին, բաժանվում և նույնպես ա-
վելի փոքր տեղամասերի: Դրանցից ամեն
մեկի պահպանութեան համար սովորաբար
գրվում և մեկ դասակ: Այդ դասակն
ստանում և պահապան ուղեկալ անունը:

Վաչտի տեղամասում սովորաբար
գրվում են յերկու պահապան ուղեկալ-
ներ, յուրաքանչյուրը մեկ դասակի քա-
նակով, վորոնք համարակալվում են աջ
թիւից դեպի ձախը: Վաչտի մնացած
(3-րդ) դասակը տեղավորվում և նրանցից
մի քիչ հետու, ըստ հնարավորութեան նը-
րանց տեղավորութեան մեջտեղի դիմաց,
և կոչվում և գլխավոր ուղեկալ: Գլխավոր
ուղեկալը համարակիր ուղեկալների ո-
ժանդակն և:

Յերբեմն վաչտի պահպանական տե-
ղամասում գրվում և միայն մեկ պահա-
պան ուղեկալ: Իսկ յեթե վաչտի տեղա-
մասը չստ մեծ և, այն դեպքում գրվում


են Յ պահապանն ուղեկալներ: Նրանցից մեկը կոչվում է գլխավոր և կառարում է նրա խնդիրները:

Վաշտի զնդացրային դասակը սովորաբար մաս-մաս տրվում է ուղեկալներին նրանց կրակային միջոցներն ուժեղացնելու համար:

Կարող ե լինել և այսպիսի զբուխյուն, վոր հանգստում տեղավորված զորամասը, իր պահպանության համար դնում է միմիայն պահապան ուղեկալներ, չնչանակելով վաշտի պահպանական տեղամասեր: Այդպես որինակ, պահպանվում է հետևակ դունդը, յերբ հակառակորդը հեռու յե, Յ յերթերից մոտիկ չե: Այդպես ել պահպանվում է և առանձին զործող գումարտակը:

Պահապան ուղեկալների բռնած դիծը, — ամբողջ անշարժ պահպանության հիմնական գիծն է: Դա կարելի յե ասել — անշարժ պահպանության կմախքն է: Այդ դժի վրա յել հակառակորդին տրվում է հակահարված նրա հարձակման դեպքում: Ուստի այդ գիծն ամրացվում, քողարկվում է: Յերբեմն նրա պաշտպանության համար նշանակվում է հրետանի:


Պահապան ուղեկալների պաշտպան
 նության դիժը պետք է միաստադաղ լինի,
 ուստի նրանք մեկը մյուսից տեղափոխվում
 են նախատույ աշնախառն տարածուծյան
 վրա, փոխադրվել նրանց միջև կրակային



Հրածիգ գնդի անշարժ պահպանություն.

կապ լինի: Այդ նշանակում է, վոր մի ուղեկալի կրակը պետք է հասնի այն տեղին, վորը կարող է գնդակոծել և հարեան ուղեկալը, և վոր առջևում ընկած ամբողջ տեղանքը լավ գնդակոծվում է:


Նայեցեք 23 և 24 եջերի գծանկարները և դուք կհասկանաք, ինչպես որինակելի կարգավորվում է հրաձիգ գնդի և առանձին գումարտակի պահպանությունը:



Առանձին հրաձգ. գումարտակի անշարժ պահպանություն.

Ահա և որինակ, թե ինչպես են պահպան ուղեկալները ծառայություն կա-

տարում մարտական պարագայում և ինչ
կատաղիի յեթե այդ ծառայությունը կա-
տարվում և մատ:



Գծանկար այս եջի որինակի համար.

1914 թ. նոյեմբերի սկիզբներին Սու-
դանն համաշխարհային պատերազմի ըն-
թացքում յերկրորդ անգամ ռուսական
գործերը վերցրել եյին: Ռուսների համար
մի շարք սաք և հաջող մարտերից հետո
Սուդանուի շրջակայքում, հրաման ստաց-
վեց յետ քաշվել հարավ, դեպի Մլավու
քաղաքը: Զորքերը բարեհաջող կերպով
յետ քաշվեցին, առանց դերմանացիներից
նկատվելու, բայց կապը նրանց հետ կոր-

ցրին: 1-ին Թուրքեստանյան կորպուսի
յետ քաշվող զորամասերը տեղավորվեցին
Մլավա քաղաքի մոտ հանգստանալու:
Անշարժ պահպանությունը դրված էր
6-րդ Թուրքեստանյան հրաձիգ գնդից:
Թե ինչպես էր նա դասավորվել, ցույց է
տալիս 25-րդ եջի գծանկարը:

Վերջին որերի ծանր մարտերը և հենց
չդադարող սառն անձրևի տակ նոր կա-
տարած յերթը խիստ հոգնեցրել էյին
մարտիկներին: Ձինվորները քնում էյին
պոստերում, բայց և այնպես գիշերը բա-
րեհաջող անցավ: Բացվեց գորշ մառախ-
լապատ առավոտը: 3-րդ վաշտի ձախ թևի
հրաձիգներից մեկը, Թվերի յետևից յե-
ղևնու անտառի յեզրից հյուսիս հանկարծ
տեսավ ինչ վոր զորասյուն: Նա շարժվում
էր ճանապարհով յերկաթուղու հողաբլրի
յերկարությամբ ուղիղ 1-ին վաշտի վրա:
Մինչև զորասյունը 400—600 քայլ էր,
բայց չնայած դրան, հրաձիգն իսկույն
ճանաչեց գերամանացիներին սաղավարտ-
ներից:

Ձարթեցնելով ընկերներին, նա հաս-
կացրեց թե հակառակորդի զորասյունը

շարժվում և դեպի 2-րդ վաշտը: Վաշտի հրամանատարը կարգադրեց վաշտի 2 գնդացիները տանել անտառի յեզրը և ինքն ել գործ յեկայ՝ հետախուզության:

Յերբ պարզվեց, Վոր հրաձիգը ճիշտ և, գրանից հետո, 2-րդ վաշտը բաց արեց հրացանային և գնդացրային կրակ գործադրանի վրա, Վորի գլուխն արդեն մոտենում եր 4-րդ վաշտին: Հարեան վաշտերը (4-րդ, 3-րդ և 1-ին), կրակից դարձնելով, նույնպես բաց արին հակառակորդի վրա ուժեղ կրակ: Գերմանացիները շժմեցին: Հրաձիգները, ոգտվելով թաքստոցներից, կրակում եյին խենթացած գերմանացիների վրա շատ հաջող: Գերմանացիները պատասխանում եյին միայն հատ ու կենտ արձակյուններով, հետո սկսեցին յետ քաշվել: Հանդիպելով 1-ին վաշտի կրակին, նոքա աշխատում եյին ճղել անցնել յերկաթուղու լիբի վրայով: Այդ բանն ել նրանց չհաջողվեց անել: Հակառակորդի գործադրանի մի մասը, Վորին հաջողվեց կտրել անցնել յերկաթուղին 1-ին վաշտի տեղամասում, փախավ դեպի հյուսիս: Մյուս մասը, Վորը գտնվում եր յերկա-

թուղու այս կողմը, վոչնչացվեց: Վոչընչացված եր մի ամբողջ գումարտակ: Գերի վերցրած գերմանացի սպան հետո սլառմեց, վոր նրանց զորասյուներ, վորը կաղմված եր 2 գումարտակից, մոլորվել եր և, իր սռջևում հետախուզություն չունենալով, հանդիպել և մեր անշարժ պահպանությանը:

ԴԱՇՏԱՅԻՆ ՊԱՀԱԿ

Պահապան ուղեկալը, իրեն ցույց տված տեղը բռնելով, իր հիմնական խընդիրը կատարածելու համար իրենից գլխում և դաշտային պահակներ:

Դաշտային պահակ և նշանակվում մի հրաձիգ ջուկ, յերբեմն յեկուսը: Ուղեկալն իր տեղամասում սովորաբար գնում և 2 դաշտային պահակներից վոչ ավելի, վորոնք առաջ են գնում 1—2 կմ. հեռավորություն: Այդ պահակները համարակալվում են աջ թևից սկսած դեպի ձախը:

Դաշտային պահակը, — դա — պահապան ուղեկալի աչքերն և ականջներն են: Նայած թե ինչպես և նա ծառայությունը կատարում, դրանից ել կախված և


ուղեկալի ամբողջ ծառայությունն ան-
շարժ պահպանության մեջ: Յեթե դաշ-
տային պահակը ծառայությունը կատա-
րում է անհող, այդ դեպքում կարող է
խորտակվել վաղ միայն ինքը, այլև պա-
հապան ուղեկալը: Իսկ յեթե ուղեկալը
խորտակվի, ծանր կնստի և իրենց պահ-
պանած զորքերին:

Ահա որինակ.

1919 թ. ամռանն Արևմտյան Դվինա
գետի ձախ ափում փոփոխակի հաջողակ
մարտերից հետո կարմիր բանակը հոկ-
տեմբերի վերջին գիրք եր բռնել այդ գե-
տի աջ ափի ընթացքով: Դիրքը ձգվում եր
Դվինակից գետի Պոլոցկ և Ուլլա ավանի
մոտ միայն անցնում եր Արևմտյան Դվի-
նայի ձախ ափը և դնում Լեպել քաղաքը և
ապա Բերեզինե գետի ընթացքով: Պոլոցկի
և Գորոխովե գյուղի միջի ճակատը բռնել
եր 145-րդ հրաձիգ գունդը, վորի կազմում
հաշվվում եր մոտ 700 սվին (մարտիկներ):
Բայց այդ քանակից մարտական գծում
կանգնած եր միայն 1 գումարտակ, մյուս
յերկու գումարտակը գտնվում եյին ո-
ժանդակում: Մեր դասավորությունը

(տես գծանկարը այս էջում) այդպիսով չատ նոսր եր, վորովհետև վաշտերը խիստ թույլ կազմ ունեյին:

145-րդ գնդի անշարժ պահպանությունը դրված եր այսպես. 4-րդ վաշտը, վորն



Գծանկար 29 և 30 եջի որինաչի համար .

ուներ ընդամենը 70 սվին, բունել եր 4 կլմ. սվելի տեղամաս Դվինայի ճախ ափում

Գործախոյն-Ոխտանիցա գյուղերի գծով:
Գլխավոր ուղեկալը գտնվում էր Ոխտանի-
ցա գյուղում: Գաշտաշին պահակները դըր-
վում էին ափի հետ գյուղերում և գետնա-
փորերում: 4-րդ վաշտից ձախ տեղամասը
բռնել էր 6-րդ վաշտը: 5-րդ վաշտը տե-
ղափորված էր Կոպտեվո գյուղից 1 և կես
կլմ. դեպի արևելք մի գյուղում: 4-րդ
վաշտի ուղից և 6-րդի ձախից հարևան
էին մյուս զնդերի վաշտերը:

Գլխնան գետ ևս չէր սառել: Ուստի
մեր զորամասերի մեծ ձգվածությունն
առանձնապես յերկյուղալի չէր, և տեղա-
մասի պաշտպանությունը գծվարություն-
ներ չէր ներկայացնում: Լեհերը տեղա-
փորված էին ձախ ափում, և հետո պարզ-
վեց, վոր նրանք ել այդ տեղամասում
մեծ ուժեր չունեին:

Նոյեմբերի սկզբին սկսվեցին առաջին
սառնամանիքները: Գետը ծածկվեց գետ
ևս այնքան բարակ սառցով, վոր նրա վը-
րայից անցնելը վտանգավոր էր, նույնիսկ
մեծածախ մարդկանց համար: Բայց և այն-
պես լեհերը սիրտ արեցին և դիչերը հար-
ձակվեցին մեր տեղափորության վրա,

նկատելով, Վոր Երդ վաշտի դաշտային
պահակներն իրենց ծառայությունը կա-
տարում եյին բավական անվստյալ :

Կարծելով, Վոր գետից անցնելը վը-
տանգավոր և, Երդ վաշտի № 1 դաշտա-
յին պահակը նոյեմբերյան տոներին իր
տեղամասում հակառակորդին գիտելու
համար թողեց 1 մարդ, իսկ ինքը գնաց
յետևում յեղած ագարակը, Վոր մասեր
յերկաթուղու տնակին : Չե վոր ագարա-
կում կարելի յեր լավ տեղավորել, քան
գետնափորում, իսկ վաշտի հրամասարը
մինչ այդ, ժամանակ չեր գտել, Վոչ մի ան-
գամ գիշերն ստուգել պահակները : Լեհե-
րն աչքերը սևեռած հետևում եյին մեր ա-
փին, և ոգտվելով պահակի հեռանալուց,
գետով անցան մեր ափը 200 մարդով : Նո-
քա գտան գետնափորում քնած ժամապա-
հին և մահվան սպառնալիքի տակ ստիպե-
ցին նրան առել անցաբանը : Դրանից հետո
մի մասը գնաց Կոստեվոյի, մյուսն Ուստո-
նիցի վրա, ճանապարհին մաքրելով գետի
ափը մեր դաշտային պահակներից : Ագա-
րակից փոխանորդելու համար յեկած կար-
միր բանակայինը տեսավ, թե ինչպես

լեհերը վրա տվեցին ժամադասին: Նա
վաղեց տեղի ունեցածի մասին զեկուցելու
իր հրամատարին, բայց ուշացավ: Լեհերն
արդեն մտակեց ի նրա Ոխտանիցին և Կոպ-
տեին, վերտեղ ի նրա 4-րդ և 6-րդ վաշտե-
րի հրամատարները: Սրանք հաղիմ կարո-
ղացան սպասովել:

Լեհերը վերցրին մեր բոլոր դաշտա-
յին պահակներին և բարեհաջող վերադար-
ձան իրենց տիր, վաղ վաղ նրանց չկարո-
ղացավ խանդարել:

Ահա թե ինչպիսի հետևանքներ են
ստացվում նրանից, յերբ դաշտային պա-
հակն անախտ չի և կատարում իր ծառայու-
թյունը:

Դաշտային պահակը պետք է իր ծա-
ռայությունը կատարի անապարտ նա պա-
տասխանատու չի ամբողջ զորամասի
հանդատի և անխտանալի չյան համար:
Դաշտային պահակում պատերազմի ժա-
մանակ ծառայությունը կատարում է հա-
մարյա ամեն մի կարմիր բանակային:
Ուստի յուրաքանչյուր կարմիր բանակա-
յին պետք է լավ գիտենա դաշտային պա-
հակի ծառայությունն և գիտակցի նրա

կարեւորությունն և պատասխանատու-
թյունը:

Ինչո՞ւմն և կայանում դաշտային պա-
հակի ծառայությունը, և ինչպե՞ս նա
պետք և կատարվի, վոր շլինեն աշխարհի
դեպքեր նման նրան, ինչպիսին յիշավ
Դվինայի վրա:

Պահապան ուղեկալից ջոկը դաշտային
պահակ նշանակվելու դեպքում ջոկի հր-
րամատարը կլինի նաև դաշտային պահա-
կի պետը: Նա պատասխանատու յե դաշ-
տային պահակի ծառայության ճիշտ կա-
տարման համար և ղեկավարում և իր
ստորադրյալներին աշխատանքը:

Դաշտային պահակ նշանակելու դեպ-
քում նրա պետը պետք և իր պահապան ու-
ղեկալի պետից, դասակի հրամատարից
ստանա հետևյալը.

1) տեղեկություններ հակառակորդի
մասին— վորտեղ և նա, վորքան և նրա
քանակը, նրա նպատակները.

2) տեղեկություններ իր զորամասերի
մասին, այլ կերպ ասած, վորտեղ են մեր
զորամասերն և ինչ պետք և անեն հետև-
յալ որը, արդյոք հետախուզություն ու-

դարկված և առաջ, ինչ պետք և անել հա-
կառակորդի հարձակման դեպքում:

3) դաշտային պահակը վերանդ տե-
ղավորվի և նրան դիտելու և դնդակոծու-
թյան համար ինչ տեղամաս և արվում,
ի՞նչպիսի և ի՞նչ դրամատներից և վո՞րտեղ
պետք և տեղավորվեն հարեան դաշտային
պահակները, վո՞րտեղ և տեղավորված
ինքր պահապան ուղեկալը:

4) ի՞նչպես կապ պահել պահապան
ուղեկալի հետ:

5) առքն և անցարանը:

6) ի՞նչ միջոցներ ձեռք առնել դի-
շերը:

7) ինքնաթիռի յերևալու և քիմիական
հարձակման մասին անդանշանները:

Առքն ու անցարանը— դրանք դադա-
նի բառեր են, վերոնք ծառայում են իրենց
մարդկանց ճանաչելու համար հակառա-
կորդից: Առքն ու անցարանը պետք և դի-
տենա միայն պահակի պետը: Դաշտային
պահակի պետը նրանք ստանում և անձամբ
ուղեկալի պետից: Վերևում ցույց տված
միտցած բոլոր տեղեկությունները, կա-


բող են և սեւաք և գիտենան դաշտային պահակի բոլոր մարտիկները:

Յերբ դաշտային պահակն իրեն ցույց տված տեղավորության վայրն և համուժ, ջուկի հրամատարն ամենից առաջ ընտրում և առջևում ընկած տեղանքը գիտելու համար մի հարմար կետ և աշխատել ծածկված տեղավորում և ժամապահին: Պետք և ժամապահին ճշտորեն ցույց արվի գիտելու տեղամասը, բացատրել, ինչի վրա առանձնապես ուշադրություն դարձնել, ի՞նչպիսի և ի՞նչ դեպքերում պայմանական նշաններ տալ:

Ժամապահի պաշտպանության առկ ջուկի հրամատարը ծածկված տեղավորում և իր դաշտային պահակը: Ամենից լավ և նրան տեղավորել կարևոր ուղղությամբ՝ դեպի հակառակորդը տանող ճանապարհների վրա, ճանապարհի խաչաձևման մոտ, բարձրությունների մոտ: Պետք և տեղավորել աշխատել, վոր նա տեսնի աջ և ձախ հարևան դաշտային պահակներին և ըստ հնարավորության՝ իր ուղեկալին:

Դաշտային պահակի բոլոր մարտիկ-

ներք պետք է լավ ծանոթանան մարտա-
կան պարագայի հետ: Դրա համար էլ



ԴԱՇՏԱՅԻՆ ՊԱՀԱԿ

Դաշտային պահակի տեղավորությունը.

նրանց դաշտային պահակի պետք հաղոր-
դում է հետևյալ տեղեկությունները.

1) վո՞րտեղից է սպասվում հակա-
ռակորդը.

2) այն տեղամասերը, վոր հանձնված
է դաշտայի նպահակին դիտելու և գնդա-
կոծելու.

3) վորտեղ են տեղավորված հարևան

դաշտային պահակներն և ուղեկալի կրակային կետերը (զնգացրերը) .

4) ողային և քիմիական տաղնապի պայմանական աղգանշաններն և նրանց նկատմամբ ի՞նչ անել :

Յույց տված տեղը բռնելով, դաշտային պահակն անմիջապես անցնում է այն ամրացնելու և քողարկելու : Պահակի տեղն ամրացվում է հրաձգական խրամատներով : Խրամատները կարելի չէ հարձարեցնել կամ մենակի՝ յուրաքանչյուր հրաձգի համար, կամ խմբական՝ 2-4 հրաձգի համար : Կարող է լինել իհարկե և միապաղաղ խրամատ՝ ջուլի համար : Դաշտային պահակի ծառայության համար ամենից հարմարը մենակի խրամատն է յուրաքանչյուր հրաձգի համար : Մենակի խրամատը կարելի չէ լավ հարձարեցնել տեղանքին, ուրեմն ավելի լավ քողարկել : Յեթե ժամանակ լինի, խրամատները կարելի չէ այնպիսի խորության հասցնել, վորը հնարավորություն է տալիս կրակել ծնկից կամ կանգնած :

Յեթե դաշտային պահակն ստիպված

և տեղափոխել բաց տեղանքում և յեթե
թիկունքի հետ հաղորդակցությունը
նույնպես բուխրովին բաց և, այդ դեպ-
քում հարկավոր և խրամատներէյ՝ դեպի
թիկունքը խրամուղիներ անցկացնել:

Յրամատի քողարկման վրա պետք և
ամենայուրջ ուշադրությունը դարձնել:
Դրա կարեւորությունը նրանումն և, վոր
հակառակորդի մեզ մոտեցած դեպքում
հանկարծակի դեմ կլինի դաշտային պա-
հակին: Ուստի և դաշտային պահակի քո-
ղարկումը պետք և կատարվի լրիվ՝ գետ-
նային, վերերկրյա, հնչյունական: Այլ
կերպ տոած, դաշտային պահակում
պետք և ամենախիտ լուսություն և կարգ
պահվի, և վորքան կարելի յե քիչ շար-
ժում լինի:

Դաշտային պահակի խրամատների
քողարկումը կատարել ձեռքի տակ յեղած
միջոցների ոգնությամբ. ճյուղերով,
ծղնոտով, խոտով, ճմռանը՝ ճնով և
այլն: Բայց ամենից լավ և խրամատն
այնպես հարմարեցնել տեղանքին, վոր
նա ինքն իրեն քողարկվի:

Դաշտային պահակի տեղամասի վրա

բոլոր նախապատրաստական աշխատանքները վերջացնելուց հետո, մարտիկները բռնում են իրենց ցույց տված տեղերը:

Դաշտային պահակը պետք է միշտ լրիվ մարտական պատրաստության մեջ լինի, ունենա սաուդված հակադաշեր: Մարտական հանդերձանքը հանել չի թույլատրվում: Դաշտային պահակում քնել նույնպես չի կարելի՝ բոլոր մարտիկները միշտ պատրաստ պետք է լինեն: Պետք է կատարյալ լուծվուն պահել և այնպիսի բան թույլ չտալ, վորը կարողանա պահակին հայտարարել:

ԺԱՄԱՊԱՀ.

Յուրաքանչյուր դաշտային պահակ իր տեղը հասնելով, վոր նշանակել է պահալսն ուշեկալի պետը, ամենից առաջ ժամապահ է դնում սուղեում: Նրա պաշտպանության տակ պահակը տեղավորվում է և ձեռք առնում այն բոլոր անհրաժեշտ միջոցները, վորոնք նպատառում են խնդրի կատարմանը:

Բացի իր դաշտային պահակին հա-

կատակորդի հանկարծակի հարձակումից պաշտպանելուց, ժամապահի վրա դըր-
վում և ելի ուրիշ, ե՛լ ավելի պատասխա-
նատու պարտականություն—դա հակա-
ռակորդի և տռջեւում բնկած տեղանքի
դիտողությանն և։ Դրա համար ել ժա-
մապահը պետք և դրվի աշխարհի տե-
ղում, վոր կարողանա տեսնել աշխամե-
նը, ինչ կատարվում և իր տռջեւում։ Բա-
ցի դրանից, ժամապահը նույնպես պետք
և տեսնի հարեան դաշտային պահակների
ժամապահներին և իր դաշտային պահա-
կին և անտեսանելի լինի հակառակորդի
համար։ Դրա համար ել նա շատ լավ քո-
ղարկված պետք և լինի։

Ժամապահը կարող և կանգնել, նըս-
տել կամ պառկել, բարձրանալ ծառը։
Կարևոր չէ, թե նա ինչ դրության մեջ և
դանդում։ Կարևորն և տեսնել շատ բան
և հետոն և ինքն ել անդուստանելի լինի
հակառակորդի համար։

Դաշտային պահակից ժամապահ դը-
նելու տեղը սովորաբար կլինի բար-
ձունքը։ Յերեկն ավելի լավ դիտելու և
քողարկվելու համար—ժամապահը դըր-

վում ե հակառակորդից հակառակ լանջի վրա, իսկ գիշերը—առջևի լանջի վրա: Չմուսնը ժամապահը հագնում ե սպիտակ քողարկու խալաթ:

Յեթե դաշտային պահակի առջևում տեղանքը բաց ե ե լայն տեսածիք (օճօր) ե տալիս, այդ դեպքում ժամապահն առաջ ե գրվում վոչ հեռուն, քան 50 քայլի վրա: Յերբեմն ել դաշտային պահակի առջևում չի լինում այնպիսի տեղ, վերտեղից կարելի լինի տեսնել առջևում ընկած ամբողջ տեղամասը: Լինում ե նաև, Վոր տեղանքը թաքնված մոտենալու տեղեր ե ունենում, վորտեղից հակառակորդը կարող ե ուղափել ե հանկարծակի մոտենալ դաշտային պահակին: Այդ յերկու դեպքերումն ել, ժամանակին դաշտային պահակին վտանգի մասին նախազգուշացնելու համար, կարելի յե ժամապահին իջենից 50 քայլից ավելի հեռուն դնել: Բայց այդ դեպքում ժամապահին ոգնելու համար, նշանակվում ե ժամապահի ոգնական, վորը տեղավորվում ե ժամապահից 10-15 քայլի վրա:

Ժամապահին ոգնելու նշանակվում ե



ժամապահի և ժամապահի ոգնական .

Ժամապահի ոգնականն նաեւ դիշերն եւ մառախուղ յեղանակին: Ժամապահի ոգնականը նշանակւում է Ժամապահի բոլոր նկատածները՝ դաշտային պահակի պետին հաղորդելու եւ նրան կանչելու համար: Ժամապահն ու Ժամապահի ոգնականը կազմում են պանպանական պոստ:

Կարող եւ դեպք լինել, յերբ Ժամապահին հարմար եւ տեղավորել վոչ թե դաշտային պահակի տոջեում, այլ նրա յետեւում: Բայց այդ կարելի չե միայն ցերեկը: Որինակ՝ դաշտային պահակը բռնում եւ բարձունքը, վորովհետեւ նա իրենից ներկայացնում եւ հարմար դիրք եւ լավ տեսածիր ու դնակոծությունն եւ տալիս դեպի առջևը: Իսկ բարձունքի յետեւում—փոքրիկ առանձին դադաթ եւ, ծառերի խումբ կամ բարձր տուն: Դրանց վրա հարմար եւ դնել Ժամապահին—այդ տեղ տեսածիր կա դեպի ամեն կողմ:

Յերբ Ժամապահը դիտում եւ ծառի վրայից, կտուրից կամ մի ուրիշ տեղական բարձր առարկայից, այդ դեպքում Ժամապահի ոգնականը տեղավորվում եւ ցածում:

Ժամապահին գնում և դաշտային
 պահակի պետն անձամբ: Պահակի պետը
 զույգ և տալիս ժամապահին, թե վոր-
 տեղից և սպասվում հակառակորդը, դի-
 տողության տեղամասի սահմանները,
 ճանապարհներն ո՞ւր են տանում, ինչի
 վրա հաստի ու շաղթության դարձնել,
 ինչպիսի՞ և ի՞նչ դեպքերում պայմանա-
 կան նշաններ տալ: Ժամապահը կամ
 ինքր, կամ ժամապահի սղնականի միջո-
 ցով բոլոր տեսածների մասին հաղորդում
 և դաշտային պահակին պայմանական նշ-
 անով, և մոչ թե ձայնով, վորպեսզի
 չհայտարարի իրեն և ամբողջ դաշտային
 պահակին: Կրակելով սղնական պետը և
 տալ միայն այն ժամանակ, յերբ հակա-
 ռակորդը յերևացել և հանկարծակի: Մը-
 նացած դեպքերում ամենից լավ և, վոր
 ժամապահը չկրակի, — մի՞թե կրակելը
 միայն հանկարծակի հարձակումից իր
 անձնական պաշտպանության համար և:

ԺԱՄԱՊԱՀԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՇ-
 ՏԱՅԻՆ ՊԱՀԱԿՈՒՄ.

Ժամապահը ծառայություն և կատա-
 րում մեկ կամ յերկու ժամ: Մի ժամից

հետո նա փոխվում է խիստ շոգին և ցրտին կամ յերբ տեղամասը շատ մեծ է և դիտողություն կատարելը դժվար է: Ժամապահի փոխանակումը կատարում է ինքը դաշտային պահակի պետն անձամբ: Նա փոխում է նաև Ժամապահի ողնականին:

Ժամապահն և Ժամապահի ողնականը կատարում են միայն այն պետի կարգադրությունները, վերք նրանց գրել է: Ուրիշ վաշ վաք իրավունք չունի նրանց կարգադրություններ անել կամ պոստից հանել:

Դիտակետը բռնելով, Ժամապահը պետք է ուղադրությամբ զննի այն և լավ ծանոթանա նրա հետ: Յեթև Ժամապահին յերկդիտակ և տված, այն գեպքում նա կարող է ամենի լավ զննել իր դիտողությունը հանձնված ամբողջ տեղամասը: Տեղամասն ուղադրությամբ ուսումնասիրելը հարկավոր է նրա համար, վերապես Ժամապահը կարողանա նկատել ամեն տեսակ փոփոխություն, վեր տեղի յե ունենում նրանում: Սմեն տեսակ նոր առարկայի հայտնվելը, վեր առաջ ան-

տեսանելի չեր, կարող է քողարկված հա-
կառակորդի ներկայությունը նշանակել:

Ժամապահի գլխավոր խնդիրն է—
սկսած աչքով դիտել հանձնված տեղա-
մասը, տեսնել և լսել բոլորը, ինչ վոր
կատարվում է առջևում—հակառակորդի
կողմում և հարևանների—կողմում, և
ժամանակին տեղեկացնել նկատած ամեն
ինչի մասին դաշտային պահակին: Ուստի
և ժամապահը չպետք է ուշադրությունը
հեռացնի դիտողությունից վոչ մի այլ
տեսակ կողմնակի դործի վրա: Նրան ար-
դելվում է աղմկել, բայց կերպով շար-
ժումներ տնել և այլն: Ժամապահը դաշ-
տային պահակի պետին կանչում է պայ-
մանական նշանով:

Դաշտային պահակի ժամապահն ա-
ռանց դաշտային պահակի պետի թույլ-
տվության վոչ հակառակորդի կողմից
իրեն կողմը, վոչ էլ իրեն կողմից հակա-
ռակորդի կողմը, վոչ վոքի բայց չի թող-
նում: Պոստին մոտեցող բոլորին, բայցի
իր ուղղակի պետերից, վորոնց անձամբ
ձանաչում է, ժամապահը կանգնեցնում է
80-100 քայլ իրենից հեռու, կանչելով

«կանդ առ»։ Կանդ առած մարդկանց հետ
ժամապահճը վռչ մի տեսակ խոսակցու-
թյան մեջ չի մտնում և կանչից հետո մը-
նում և լրիվ մարտական պատրաստու-
թյան մեջ։ Միևնույն ժամանակ նա նշա-
նով կանչում և դաշտային պահակի պե-
տին և զեկուցում և նրան կատարվածի
մասին։ Յեթե ժամապահճին մոտեցողն իր
կանչելով չի կանգնում, այդ դեպքում
ժամապահճը պետք է կրկնի կանչը մինչև
յերեք անգամ։ Յեթե սա դարձյալ շարու-
նակում և գնալ կամ նույնիսկ կսկսի վա-
ղել, այս դեպքում ժամապահճը պետք է
կրակի։ Պետք է կրակել և նրանց վրա,
ովքեր առաջին «կանդ առ» կանչից հետո
կփախչեն ժամապահճից։

Բայց և այնպես ժամապահճը պետք է
տարբերի, ով է իրեն մոտենում և ում
վրա պետք է կրակել։ Յեթե նա նկատում
է, վոր դեպի իրեն սողալով մոտենում և
հակառակորդի հետախույզը, այստեղ
ուրեմն մտածելու հարկ չկա—պետք է
կրակել առանց վորևե նախապզու-
թյան, թե չէ ինքդ կխորտակվես։ Բայց
յեթե նրան մոտենում է անդեն մի ծե-

բուկ, վորը կանչելով չի կանգ առնում,
այստեղ իհարկե կրակելն անմտություն
է, վորովհետեւ նա կարող է ե' խուլ, ե'
կույր, ե' հաշմանդամ լինել:

Պոստում ժամապահը պետք է միշտ
լրիվ մարտական պատրաստության մեջ
լինի, զենքը լրիվ պահուենակ լցրած լինի,
հրահանր պահպանիչ վրտի վրա:

Պոստի դրված ժամապահն է ժամա-
պահի ոգնականը, վոչ մի դեպքում
չպետք է իրենց պոստը թողնեն ավելի
շուտ, քանի դեռ դաշտային պահակի պե-
տը նրանց չի փոխել: Յեթե ժամապահն
անհրաժեշտություն ունի բացակայելու,
այդ դեպքում նա իր պարտականություն-
ները հանձնում է ժամապահի ոգնակա-
նին կամ թե սպասում է, մինչև փոխ-
վելը:

Փոխվելու ժամանակ ժամապահը
մանրամասն տեղեկացնում է նոր ժամա-
պահին իր բոլոր նկատածների մասին.
վորտե՞ղ, յե՞րբ և յերեացել հակառա-
կորդը, ինչպե՞ս է նա իրեն պահում և
այլն:

Ժամապահն է ժամապահի ոգնակա-

ներ դրվում են դաշտային պահակից: Սա-
կայն մանր զորամասերը հանդատում տե-
ղավորված դեպքում (դասակից վոչ ա-
վելի) պահպանության համար դրվում են
միայն դիտողական պոստեր յուրաքան-
չյուրը 2 մարդուց վոչ պակաս: Այդ
պոստերի ծառայությունն ել նույնպիսի
յե, ինչպես և ժամապահինն ու ժամա-
պահի ոգնականինը, վորոնք դրված են
դաշտային պահակից:

Ի՞նչ է տեղի ունենում, յերբ ժամա-
պահն անշարժ պահպանության մեջ իր
ծառայությունը ճիշտ չի կատարում—
կարելի յե տեսնել, որինսկ՝ աշտպիսի
դեպքից:

1914 թ. ոգոստոսի կեսերին գերմա-
նացիք Ինստերբուրգ քաղաքի մոտ պար-
տվելուց հետո շտապ յետ ելին քաղվում
Գերմանիայի խորքերը: Նրանց յետևից
կրնկակոխ գնում եր ռուս հեծելազորը:
2-րդ հեծյալ գլխիցիան խիստ մեծ յեր-
թից հետո կանգ առավ գիշերելու և տե-
ղավորվեց մի քանի ֆորվարկներում*)
(կարված): 2-րդ Ուլանական Կուրլյան-

*) Ֆորվարկ—վոչ մեծ կարված:

դաժան դաժողը կանգ առաւ այդ կալ-
վածներէից մեկում: Հետեւյալ որը լուսա-
բային գիւղիկիան պետք է նորից շարու-
նակեր հետադնդել հակառակորդին:

Վերսկհետե մինչև մութն ընկնելը
գետեւ քաղաքիան ժամանակ կար, ուստի
ուղարկից հեծեյաղետք 20 ձիաՎորից
բաղկացած 2-րդ ուլանական գնդից սպա
Նովիկովի հրամատարութեամբ, վորին
հրամայած էր հակառակորդի հետա-
խուզութեան կատարել, վորի համար ըն-
թանայ խճուղով մինչև տվանը, վորտեղ
և մնայ մինչև գիւղիկայի մոտենալը:
Նովիկովը գետեւ լույսով հասաւ տվանը:
Այդտեղ հակառակորդ չկար, բայց շատ
գերմանացի վախժատականներ կային:
Ուստի տվանում մնայն տնտանդ չեր,
Նովիկովը վճռեց յետ դալ $1\frac{1}{2}$ կմ. և
տեղավորել խճուղան մոտիկ վորեւե
տեղում, վորպետի մյուս որը տեանի,
ինչպես և մոտենում իր գիւղիկան: Գի-
շերսթի համար Նովիկովն ընտրեց մի վոչ
մեծ ֆերմա*) ճանապարհին մոտիկ ա-

*) Ֆերմա—արտասահմանում առանձին յե-
կամտարեր գյուղացիական տնտեսութեան (խու-
սոր), մեծ մասամբ ունեւոր տիպի:

վանի յետևում $1\frac{1}{2}$ կլմ. վրա բարձուն-
քում:

Մանեյով Ֆերմա, Նովիկովն իջավ
ձիուց, կարգադրեց պոստեր դնել, իսկ
ինքը բնակարան մտավ: Հեծելադեաքի
մարդիկ իջան ձիերից, նիզակները գրե-
ցին սանդուխքի մոտ, իսկ ձիերին վըճ-
ոեցին քաշել սարայը: Վորովհետև ձիերը
լրիվ բռնով դռնից չէյին անցկենում,
ուստի ուլանները նրանց թամքերը վեր
առան, թամքերն և զենքը դարսեցին սա-
րայում և այդտեղ ել իրենք պառկեցին
քնելու:

Ֆերմայումն էյին գտնվում տերն և 16
տարեկան մի պատանի: Նովիկովին և հե-
ծելադեաքի մարդկանց Ֆերմայի տերն
բնդունեց լավ, հյուրասիրեց նրանց: Բայց
մի առժամանակ հետո հեծելադեաքի
մարդիկ նկատեցին, վոր տնատիրոջ ձին
և պատանին ուր վոր անհայտացան: Նը-
կատելը—նկատեցին, բայց վոչ մի միջոց
ձեռք չառան փնտռելու, այլ բնդհակա-
ռակը մեծ հանգստությամբ պառկեցին
քնելու: Հեծելադեաքի պահպանության
համար գրված էյին պոստեր, բայց նոքա

փոխանակ ճանապարհին մոտիկ տեղա-
վորվելու, կանգնեցին Փերմայի դռնակի
մոտ: Գիշերը չափ մութն էր:

Կտրճ ժամանակից հետո ժամապահը
լսեց չան ուժեղ հաջոց ճանապարհին մո-
տիկ մի տեղում: Նա այդ բանի վրա վոչ
մի ուշադրություն չդարձրեց և կրակեց
միայն այն ժամանակ, յերբ գերմանացիք
արդեն ներխուժեցին Փերմա սարայների
միջև յեղած վոչ մեծ անցքով: Ներխու-
ժելով, գերմանացիք ամենից առաջ վա-
կեցին սարայի դռները ձիերի վրա, իսկ
նրանցից մի քանիսն ուղղվեցին Նովի-
կովի սենյակը: Սպան տարճանակով յեր-
կու գերմանացիների սպանելով, վազեց
գեպի դուռը սանդուխքների վրա դուրս
գալու, բայց սպանվեց գերմանացու ձեռ-
քով: Շուտով գերմանացիք իրենց հա-
շիվները տեսան ամբողջ հեծելազետքի
հետ և միայն պատահական փախած մեկ
մարդ գնդին իմաց տվեց կատարվածի
մասին:

ԴԱՇՏԱՅԻՆ ՊԱՀԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Դաշտային պահակը, կանոնադրքի
համաձայն, ծառայություն և կատարում

մի գիշեր և ցերեկ (սուտիկի) . բայց նա-
յած մարտական սպարազային բացառիկ
դեպքերում նրա ծառայությունը կարող
է տեւել աժեշտի կամ պակաս :

Ժամապահն անընդհատ հակառակոր-
դի և տեղանքի դիտողությունն է կատա-
րում , իսկ դաշտային պահակը նրան ծա-
ռայում է վերապես հենարան : Միաժամա-
նակ , դաշտային պահակը—դա առաջին
դիրքն է , վերից հակառակորդին առաջին
հակահարվածն է տրվում՝ հակառակոր-
դի հարձակման դեպքում :

Դաշտային պահակը գիշերն և ցե-
րեկը միշտ պետք է պատրաստ լինի հա-
կառակորդին յետ մղելու : Ուստի մշտա-
կան լրիվ մարտունակության մեջ պա-
հելը—գլխավոր պահանջն է՝ պահակի
վրա դրված խնդիրը կատարելու համար :

Դաշտային պահակի գլխավոր խըն-
դիրն է—պահպանել հանգստում մեղա-
վորված զորամասերին և հակառակորդին
բաց չթողնել իր գծից այս կողմը : Դաշ-
տային պահակն իր խնդիրը կատարում է
ըստ հնարավորության հակառակորդի
հետ մարտ , չմտնելով , բայց մարտի նա

միշտ պետք է պատրաստ լինի: Իսկ յեթե
մարտական պարագան դառախորովում է
աշխարհ, վսր հնարավորությունն չկա
խուսափել մաքախց, ապա դաշտային
պահակի գործողությունները պետք է
լինեն վնասակա և համարձակ մինչ ան-
վեհերություն: Դաշտային պահակի պե-
տի նախաձեռնությունն աշտեղ—առաջ-
նակարգ գործ ունի: Յուլմունքներ ստա-
նալու ժամանակ չի լինի, կարող է լինել
վսր վսք չլինի այլ անկու: Գործելով ըն-
դարձակ տեղամասում, դաշտային պա-
հակն ուղտվում է գործողությունների
կատարյալ արատությամբ, բայց այս
դեպքում նա յերբեք կրակի կապը հարե-
վանների հետ չպետք է կտրի,—թե չե
կկորչի, կչրջապատվի և գերի կվերցվի:

Հարձակվող հակառակորդին յետ մը-
դելու միջոցներից մեկը պետք է լինի իր
ժամանակին հակադրոհը դաշտային պա-
հակի պետի նախաձեռնությամբ:

Հակառակորդի հետ դաշտային պա-
հակը մարտ է մղում հրաձիգ ջոկի պաշտ-
պանության մարտի կանոնների համա-
ձայն: Դա հարկավոր է հիշել դաշտային

պահակը տեղում տեղավորելու ժամանակ, նույնպես և առջևում ընկած տեղանքի ուսումնասիրության ժամանակ: Մեծ ուշադրություն պետք և դարձնել զնդակոծության վրա, թաքնված մատույցների ուսումնասիրության վրա, մինչև տեղական առարկաները տարածությունը չափելու վրա, բայց թևերի պահպանության գործի վրա և այլն:



Դաշտային պահակը յետ և մղում հակառակորդին.

Իր տեղը դաշտային պահակը կարող է թողնել իր պահապան ուղեկալի պետի հրամանի համաձայն միայն և շատ ուժեղ հակառակորդի ճնշման տակ:

Յետ քաշվելու մասին հրաման տա-

լուց հետո դաշտային պահակի պետն
սկզբում յետ և բերում ժամապահին և
ժամապահի ուղևորանին, իսկ հետո ար-
դեն մարմատ յետ և տանում դաշտային
պահակը: Դաշտային պահակը պետք և
յետ քաշվի կամ պահապան ուղեկալի
թեի կողմը, կամ նրա զնդացրերի մեջ-
տեղը, մարտնք տեղամարմած են մորոշ
կետերում, մարպետի շծածկեն նրանց
զնդակած կուց:

Անշարժ պահպանության մեջ սովո-
րական բան և—յերբ դաշտային պահա-
կին մոտենում են անհատ մարդիկ կամ
մոշ մեծ խմբակներ: Դա կարող և լինել
և հակառակորդը, կարող և լինել և իր
հետախույզությանը: Բայց ով մոր ել դա
լինի, յերբ նրանք նկատված են դաշտա-
յին պահակի տեղամասում, ժամապահը
կամ ինքը կամ ժամապահի ուղևորանի
միջոցով պարտական և անմիջապես դե-
կուցել նրանց մասին դաշտային պահակի
պետին:

Յեթե ժամապահը հաղորդում և,
մոր դաշտային պահակին մոտենում են
հակառակորդի անհատ հետախույզներ

կամ նրա վոչ մեծ խմբեր, այդ գեպքում
դաշտային պահակը նրան թույլ ե տալիս
մոտենալու ավելի մոտ, իսկ հետո աշ-
խատում ե նրան գերի վերցնել կամ թե
վոչնչացնել: Դրա համար դաշտային
պահակը յերբեմն թաքուն առաջ ե շարժ-
վում, վորպեսզի չբջապատի կամ ջարդի
հակառակորդին:

Այն գեպքում, յերբ հակառակորդի
խմբերը մոտենում են հարեան դաշտա-
յին պահակին կամ պահապան ուղեկալի
տեղավորության վայրին, դաշտային պա-
հակի պետը պարտական ե ոգնել իր հա-
րեանին՝ գերի վերցնել կամ վոչնչացնել
այդ խումբը, միայն այնպես, վոր դա
շխանգարի իր հիմնական խնդիրը կա-
տարելուն:

Հակառակորդի գերի վերցրած մարդ-
կանց պետք ե անմիջապես տանել ուղե-
կալ: Այնտեղ նրանց հարց ու փորձի յեն
յենթարկում հակառակորդի մասին տե-
ղեկություններ ստանալու համար: Գերի
վերցրածներին ուղեկցելու համար դաշ-
տային պահակի պետն ուղեկալ ե ուղար-
կում ուղեկցուրդի յետեից. յերբ ուղե-

կցուրդը դալիս և—նրան և հանձնում գե-
րիններին։ Իհարկե հակառակորդի գերի
վերցրած մարդիկ պետք և անմիջապես
դինաթափ արվեն։ Հակառակորդի սպան-
ված մարդկանց նույնպես անհրաժեշտ և
տանելի ուղեկալ։ Նրանցից վոչ մի բան
վերցնել չի թույլատրվում, վորովհետև
սպանվածների վրա գտնված առարկանե-
րով և փաստաթղթերով, կարելի չե շատ
բան խմանալ հակառակորդի մասին։

Տեղական բնակիչներին անշարժ պահ-
պանության գծից անցնելը չի թույլա-
տրվում։ Վստով և ձիով յեկած մարդ-
կանց դաշտային պահակի պետք պետք և
յետ գարձնի։ Հակառակորդի կողմից յե-
կած տեղական բնակիչներին պետք և բաց
թողնել, բայց հարցաքննել։ Նրանք, ով-
քեր հետաքրքիր տեղեկություններ են
տալիս հակառակորդի մասին, պետք և
ուղեկցուրդի հսկողությամբ ուղարկվեն
ուղեկալ։ Յուրաքանչյուր սայլ, վոր դա-
լիս և հակառակորդի կողմից, պետք և
մանրույնին խուզարկի դաշտային պա-
հակը—չկա՞ արդյոք այնտեղ զենք, թաք-
ցրած մարդիկ և այլն։



Դաշտային պահակը զննում է սայլը .

Իրենց զորամասերին—որինակ հե-
տախուզությունը, դեաքը, վաբոնք գնում
են հակառակորդի կողմը—բայ են թող-
նում, բայց դաշտային պահակի պետն
անպայման պետք է հարցնի նրանցից
անցարանը: Յեթե նրանք անցարանը չեն
իմանում, այդ դեպքում դաշտային պա-
հակը նրանց բայ չի թողնում մինչև ու-
ղեկալի պետից թույլտվություն ստա-
նալը:

Մեր զորամասերը, վաբոնք գալիս են
հակառակորդի կողմից և անցարանը գի-
տեն, բայ են թողնվում անարդել, իսկ
յեթե նրանք անցարանը չգիտեն, այդ
դեպքում հարկավոր է նրանց բանդ անել
մինչև պահապան ուղեկալի պետից ցույ-
մունքներ ստանալը: Յեթե հակառակոր-
դի կողմից գալիս է մեր յրատարը գեկու-
ցումով և անցարանը չգիտե, ապա նա
բանդ չի արվում, ուղարկվում է ուղե-
կալ, բայց ուղեկցուքով:

Հակառակորդի կողմից յերբեմն մեր
կողմն են անցնում անհատ գլխավորներ
կամ վոչ մեծ խմբեր—փախստականներ:
Ժամապահը կանգնեցնում է նրանց և

կանչում դաշտային պահակի պետին: Նա մոտենում է և հրամայում փախստակներին վայր դնել զենքը, հեռանալ նրանից մի կողմ և յերեսները շուռ տալ դեպի հակառակորդը: Ապա դաշտային պահակի պետն ուղարկում է ուղեկալի պետի մոտ ուղեկցուրդի յետևից, սպասում է նրա գալուն և միաժամանակ նայում, վոր փախստակները յերեսները յետ չըդարձնեն մեր կողմը: Ուղեկցուրդի գալուն պես փախստակներն ուղարկվում են նրա հետ ուղեկալ:

Ընդհանրապես բոլոր անհատ մարդկանց, վորոնք գնում են ինչպես հակառակորդի կողմը, նույնպես և մեր դուրքերի կողմը և չդիտեն անցարանը, դաշտային պահակի պետը բաց չի թողնում և ուղեկցուրդի հսկողությամբ ուղարկում է ուղեկալ:

Պատերազմում զեպքեր են լինում, յերբ հակառակորդն ուզում է մի վորեւ բանի մասին դաշնախոսել մեր դուրքերի հետ, սրինակ՝ վիրավորներին և սպանվածներին հավաքել: Դրա համար ուղարկում է իր բանազնայներին (պարլա-

մենայն) : Աստուրաբար բանազնաց են նշանակում հրամատարական կաղմի անձերից : Նա հայտնվում է սպիտակ դրոշակով կամ նիզակի վրա սպիտակ նշանով :

Բանազնացները 3 մարդուց ավելի չպետք է լինեն : Նրանց հետո սովորաբար լինում է փողահար, վար մեր տեղավորությանը մտանալու ժամանակ նվագում է :

Յեթե բանազնացներին ընդունելու մասին կարգադրության կա, այդ դեպքում դրա մասին դաշտային պահակի պետք պետք է ստացուց իրազեկ լինի : Նրանց ընդունելու համար ցույց է տրվում ժամանակ է տեղ, վարանդ գալիս են հրամատարական կաղմի հատուկ անձեր, վարժիք լիազարմած են բանակցությաններ վարելու : Յերբ բանազնացները համեստ են դաշտային պահակի մոտ, ապա դաշտային պահակի պետք կապում է նրանց աչքերը, վարպետի նրանք հանանեն մեր տեղավորությանը, և ուղարկում է աչնակ, վարանդ ցույց է տրված ընդունելության համար : Նույն կերպ,



Բանագնացների ընդունելություն.

այսինքն կապված աշխարհ, նա բաց և
թափում բանազնացներին հակառակորդի
կողմը վերադարձին:

Բանազնացների վրա կրակել էի կա-
րելի: Նրանց զենքը վերցնելն ել նույնպես
էի թույլատրվում:

Յեթև կարգադրություն և յեղել
ընդհանրապես բանազնացներ չընդունել,
այդ դեպքում գաշտային պահակի պետն
ստացարկում և նրանց վերադառնալ,
հասկացնելով, վոր բանազնացներ չեն
ընդունվում: Հետացող բանազնացների
վրա նույնպես չի կարելի կրակել:

Յերբ որ ու գիշերն (սուտի) անց-
նում և, գաշտայի պահակը սովորաբար
փոխվում և: Վաչ մի դեպքում չի կարելի
թույլ տալ, վոր գաշտային պահակը
թափն իր տեղն ստանց փոխարինողի,
վորովհետև իրեն պահպանելու հանձնված
տեղամասը, հանդիսանում և հանձնվե-
լիք: Դաշտային պահակի ինքնագլուխ
(ստանց փոխվելու) իր տեղից հեռանա-
լու դեպքում կարող են շատ ցավալի հե-
տևանքներ տեղի ունենալ: Պահպանու-
թյան գծի ճեղքումով կարող և ուղտվել

Հակառակորդն և մեզ պատճառել շատ
փորձանքներ :

Դաշտային պահակն իրավունք ունի
յետ գնալ ուղեկալ միայն այն ժամանակ,
յերբ նրան ուրիշը փոխել է : Փոխվելու
ժամանակ հին դաշտային պահակը պար-
տավոր է նորին հաղորդել իր գիտեցած
բոլոր տեղեկությունները հակառակորդի
մասին, իրենց հարեալների մասին և այն
բոլորը, ինչ անհրաժեշտ է ճիշտ և ա-
նընդհատ ծառայություն կատարելու :
Փոխվելու ժամանակ ամենից առաջ փոխ-
վում են ժամապահն ու ժամապահի ող-
նականը, ապա և ամբողջ դաշտային պա-
հակը :

Բացի պահապան ուղեկալից գրված
դաշտային պահակներից, գրվում են ելի
աշտպես կոչված առանձին դաշտային
պահակներ : Այդ լինում է այն ժամա-
նակ, յերբ առանձին դործող վաշտը տե-
ղավորված է հանգստում : Այդպիսի պա-
հակները գրվում են վաշտից 2 կլմ. վոչ
հեռու, և նրանց ոժանդակ է հանդիսա-
նում ամբողջ վաշտը : Առանձին դաշտա-
յին պահակում նույնպես նշանակվում է

մի հրաձիգ ջակ: Նրա ծառայությանն
անշարժ պահպանության մեջ վաճնչով չի
տարբերվում դաշտային պահակի ծառա-
յությանից, վոր դրվում է պահապան
ուղեկալից:

ԳԱՂՈՆԲՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐԵԿՆԵՐՆ ԱՆՇԱՐԺ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ.

Ժամապահին վաչ ամեն ժամանակ
սեռանելի չե դաշտային պահակի պահ-
պանությանն հանձնված ամբողջ տեղա-
մասը: Զորակները, ճարերը, միջանառ-
ակները, թիւաւները հաճախ ծածկում
են ժամապահից այն բոլորը, ինչ կատար-
վում է նրանցում: Իսկ հենց այդ տեղե-
րով էլ հակառակորդը կարող է ծածուկ,
զապառույցի անցնել և հանկարծակի
հարձակվել և՛ ժամապահի և՛ դաշտային
պահակի վրա:

Այդ բանը տեղի չունենալու համար,
դեպի հակառակորդի կողմը, դաշտային
պահակի և նրա պահապան պոստի տալե-
վում, դրվում են ցաղոնքներ: Գաղոնք-
ները հաճախ դրվում են դաշտային պա-
հակների միջև, յեթե նրանց մեջտեղում

ծածուկ մատուցցներ կան (ձորակ, ան-
տառ), վորոնց դիտողությունը դաշտա-
յին պահակի համար դժվար է: Այդպիսի
տեղերում գաղտնքներ դրվում են ցերեկ-
ները: Գիշերն և մատախուղ յեղանակին
դաշտային պահակի ստջնում գաղտնք-
ներ դրվում են ամեն ժամանակ:

Գաղտնքներ դրվում են պահապան
ուղեկալից: Նրանց խնդիրն է—զգու-
շացնել ուղեկալին վտանդից:

Գաղտնքի կազմում նշանակվում են
2-3 մարտիկներ: Նոքա ստանց աղմուկի,
թաքուն գնում են ցույց տված տեղը և
այդտեղ տեղափոխվում են ծածկված:
Գաղտնքն այնպես պետք է քողարկվի,
վոր իր ներկայության մասին վոչ վոք
անգամ չմտածի: Գաղտնքը պետք է սե-
վեռած աչքերով հետևի այն բոլորին, ինչ
վոր տեղի յե ունենում նրա շուրջը և ու-
շադրությամբ ականջ դնի, հատկապես
գիշերը, յերբ աղմուկից միայն կարելի չ
զուշակել հակառակորդի մոտենալը:

Գաղտնքում պետք է կատարյալ լը
ռություն պահպանել: Ծխել և խոսակցե
չի կարելի:

Գաղտնքը վաչ վոքի չի կանգնեցնում
և վաչ վոքի հարցաւորձ չի անում: Այն
գեպքում, յերբ նրան մոտենում և հակա-
ռակորդի վաչ մեծ խումբ, նա սկետք և
աշխատի սրայմանական նշանով դրա մա-
սին խնայ տալ գաշտային պահակին կամ
ուղեկային: Յեթե դա գժվար և անել,
ապա գաղտնքը սկետք և դործի հանկար-
ծակի, վորպէս թէ դարանից, գերի վեր-
ցնի հակառակորդին կամ վոչնչացնի:

Յեթե գաղտնքի վրա յե յեկել հակա-
ռակորդի խոշոր խմբակ, ապա նա զգու-
շացնում և յուրայիններին վառնելի մա-
սին կրակ բաց անելով: Հակառակորդի
մեծ ուժի հարձակման գեպքում գաղտնքը
կովելով յետ և քաշվում գեպի ուղեկայը,
աշխատելով իր պահապան գործառների
գնդակոծությունը չխանդարել:

Գաղտնքներին վաչ վոք չի փոխում, և
նորա ծառայությունը կատարում են
մինչև իրենց ցույց տված ժամանակը
կամ մինչև հառուկ կարգադրությունը:
Հենց վոր ժամանակն անցնում և, նո-
քա նույնպէս ծածուկ յետ ևն քաշվում
գեպի պահապան ուղեկայը: Գիշերվա

դադոնքները սովորաբար վերջացնում են ծառայությունն և վերադառնում են ուղեկալ լուսարացին:

Ծառայությունը ճիշտ կատարելու համար անչարժ պահպանության մեջ դործում են նաև պարեկները (դետք): Պարեկները նշանակվում են կամ դաշտային պահակի առջևում բնկած և նրանց միջև յեղած տեղանքը զննելու, կամ ըստուգելու դաշտային պահակի ծառայության կատարման ճշտությունը, կամ կապի համար հարեան ուղեկալների հետ:

Պարեկի կազմում նշանակվում են պահապան ուղեկալից 2--3 մարտիկներ, վորոնցից մեկը--ավագ: Պարեկի ծառայությունը տեում է մինչև ցույց տված ժամանակը, վորից հետո պարեկը վերադառնում է ուղեկալ:

Տեղանքը զննելու համար պարեկ և ուղարկվում այն ժամանակ, յերբ դիտողության շերտում կան այնպիսի տեղեր, վորոնք անտեսանելի չեն դաշտային պահակի և ժամապահի համար. ձորակներ, ձորեր, անտառներ: Պարեկ ուղարկելիւ, պահապան ուղեկալի պետը ճիշտ ցույց է

տալիս նրան, ինչը զննել և մինչև յերբ
կատարել զխառդությունը: Պարեկը ծա-
ծուկ մանում և ցույց տալով շրջանը և
մնում և աշնակ, զխառդություն կատա-
րելով և մեկ-մեկ ել շրջագայելով աշն:
Հակառակորդի մենակ մարդկանց և մանր
խմբերը պարեկը բռնում և կամ վռչի-
նում: Նրա պարտականությունների
մեջ և մանում նույնպես սգնել դաշտային
պահակին հակառակորդի հետախույզնե-
րի հետ յեղած կռվում:

Գաշտային պահակներին և ժամա-
պահներին ստուգելու համար ուղարկված
պարեկը, անպայման պետք է անցնի բո-
լոր դաշտային պահակներն և պոստերը:
Նա պետք է ստուգի թե արդյոք ճիշտ և
արթն^ուն են կատարում ծառայությունը,
քնած չե^ոն արդյոք, դեռ չեն^ո ցրվել
արդյոք և այլն: Նկատած բոլոր անկար-
գությունների մասին պարեկի ալազը
ցույց է տալիս դաշտային պահակի պե-
տին, իսկ ուղեկալ վերադառնալիս զե-
կույսում և ամենի մասին նրա պետին:

Հարեան ուղեկալների հետ կապի հա-
մար ուղարկված պարեկը, պետք է ան-

պաշման հասնի նրա մոտ: Ուղեկալ հաս-
նելով, պարեկի ավազը, նրա պետին զե-
կուցում և այն բոլորի մասին, վոր նկա-
տել և ճանապարհին, և ինչ և հրամայ-
ված նրան հաղորդելու: Դրանից հետո
նա ուղեկալի պետից տեղեկություններ և
ստանում հակառակորդի մասին իր ուղե-
կալի պետին զեկուցելու համար: Պարեկն
իր բոլոր տեղաշարժումները պետք և կա-
տարի ծածուկ և կատարյալ լուրջյուն
պահելով:

ԿԱՊԸ ԴԱՇՏԱՅԻՆ ՊԱՀԱԿՈՒՄ

Դաշտային պահակում ծառայության
ճիշտ կատարումը կարող և ապահովվել
միայն այն դեպքում, յեթե նա պահպա-
նում և ամենամոտ կապ իր ժամապահի,
պահապան ուղեկալի և հարեանների հետ:
Ինչպես մենք ասեցինք, ժամապահը տե-
տեղավորվում և դաշտային պահակից
մոտ 50 քայլի վրա: Այդ արվում և նրա
համար, վոր դաշտային պահակն և ժա-
մապահը լինեն փոխադարձ տեսողական
կապի մեջ, այլ կերպ ասած— տեսնեն մե-
կը մյուսին, և վոր ժամապահի համար

հեշտ յինի դաշտային պահակին տեղեկու-
թյանն և հաղորդելը :

Յեթև դաշտային պահակը տեղավոր-
ված և ժամապահից 5) քայլից ավելի հե-
ռու, այդ դեպքում դրանց միջև կապի
համար գրվում և ժամապահի ոգնական :
Դաշտային պահակի համար կապի միակ
հարմար միջոցը—դրանք պայմանական
նշաններն են, կամ ծայրահեղ դեպքում—
արձակյալներ : Յեթև ժամապահը բա-
վական հեռու գրված յինի դաշտային պա-
հակից, ուստի նրան հակառակորդը կա-
րող և ավելի շուտ հանել, քան թե դաշ-
տային պահակը կհասնի նրան ոգնու-
թյան :

Ինքը դաշտային պահակը գրվում և
պահապան ուղեկալից 2 կմ, վաչ հեռու :
Այդ արվում և նույնպես իրար մեջ փոխա-
դարձ սերտ կապ պահելու համար : Թույլ
դաշտային պահակն ավելի առաջ շարժե-
լը փտանդավոր և : Հակառակորդը կարող
և նրան շարժապատել և վաչնչացնել մինչև
պահապան ուղեկալի ոգնության հա-
նելը :

Դաշտային պահակի և պահապան ու-

դեկտյի միջև կապը պահպանվում է սո-
վորաբար լրատարներով: Սակաւ դեպ-
քերում — հեռախոսով: Այդ արվում է
այն դեպքում, յերբ դաշտային պահակը
գլխած և շատ կարեւոր ուղղութեան վրա
և իր ուղեկալից հեռու յե տարված:

Հարեան դաշտային պահակներին հեա-
կապ պահպանելը պահանջվում է նրա հա-
մար, վորպեսզի դաշտային պահակը լավ
խմանա, թե ինչ է կատարվում հարեան-
ների մոտ, և համաձայն դրանց իր կող-
մից միջոցներ ձեռք առնի: Յեթե հարե-
վան դաշտային պահակի վրա յե հա-
ձակվում հակառակորդը, մեր դաշտային
պահակը կամ պահապան ուղեկալը կարող
են բզնել նրան: Ուստի և դաշտային պա-
հակները տեղավորվում են այնպիսի տա-
րածութեան վրա մեկը մյուսից, վորպե-
զի մեկը կարողանա իր կրակով ոգնու-
թեան գալ մյուսին: Յեթե որինակ հա-
րեան դաշտային պահակը վռնչացվի հա-
կառակորդի կողմից, ապա կարող է լի-
նել, վոր հակառակորդը ճեղքվածքից
դուրս կգա մեր ուղեկալի թիկունքը: Իսկ
յեթե դրա մասին մեր պահակն իմանա---

նա միջոցներ ձեռք կտանի, վարպետի
այլ բանի չպատահի:

Առանց դաշտային պահակների մեջ
փոխադարձ հաստատուն կապի չի կարելի
պահպանական ծառայությունը ճիշտ կա-
տարել: Յեթե չկա կապ կամ նա վատ է,—
միշտ սպասիր վտրեկ ծանր անակնկալի:

ԳԱՇՏԱՅԻՆ ՊԱՀԱԿՔ ԶԵՄԵԼԱԶՈՐԻ
ՀԱՆԳՍՏՈՒՄ ԿԱՆԳՆԱԾ ԺԱՄԱՆԱԿ

Զիտիսը զբաղմաները պատերազմի
ժամանակ գործում են սովորաբար ինք-
նուրույն: Նրանք կատարում են հակառա-
կորդի հետափոք հետախուզություն, առ-
պատակություն են կատարում նրա թի-
կանքում և այլն: Յեւ ճանդատի կանգ-
նած ժամանակ հեծեյազորը պահպան-
վում և սեփական ուժերով և միջոցներով:

Հեծեյազորի անշարժ պահպանու-
թյան ծառայության կատարման հիմքե-
րն ընդհանրապես նույնն են, ինչ վոր հե-
տեակի համար: Բայց կան և տարբերու-
թյուններ: Հեծեյազորը ձիեր ունի, և նա
ծառայություն կատարում և ամենից շատ
ձիով: Հենց դա յեւ անշարժ պահպանու-

Թյան ծառայությունը մի քիչ գանադա-
նում և հետևակից:

Յոշոր հեծյալ գործառն, որինակ
դիվիզիան, հանգստում տեղավորված
Ժամանակ իր պահպանության համար
դնում և մի քանի պահապան հեծելավաշ-
տեր և առանձին դասակներ հանգստացող
զորքերից 5—10 կլմ. տարածությունից
վոչ մոտ: Առանձին դասակն այդ դեպ-
քում ստանում և պահապան ուղեկալ ա-
նունը: Այդպիսի մեծ հեռավորություն
յուրայիններից համեմատած հետևակի
հետ թույլատրվում և այն պատճառով,
վոր պահապան հեծելավաշտերն և դա-
սակները հակառակորդի մեծ ուժի հար-
ձակման դեպքում ձիով ավելի արագ
յետ կքաշվեն, քան հետևակը:

Անշարժ պահպանության ուղարկ-
ված յուրաքանչյուր հեծելավաշտին և
դասակին տեղամաս և տրվում— հեծե-
լավաշտի համար մինչև 3 կլմ. լայնու-
թյամբ, դասակի համար— մինչև 2 կլմ.:

Պահապան հեծելավաշտերն և առան-
ձին պահապան ուղեկալներն իրենցից

1—2 կրթ. տաճեում գնում են դաշտային պահակներ:

Դաշտային պահակներն իրենցից զընտրում են պահպանական պատեր 2 մարդուց:

Հեծյալ գունդն իր պահպանության համար պահապան հեծելաովաշտեր չի ուղարկում և կարևոր ուղղությունները միայն պահպանվում և առանձին պահապան ուղեկայներով (գառակներով), իսկ մյուսների միայն — առանձին դաշտային պահակներով մի ջոկի ուժի չափով:

Յեթև հանդատանում և վոչ մեծ հեծյալ զորամաս, ապա նա պահպանվում և գիտապահան պատերով միայն ամեն մեկը 3 մարդուց:

Բացի անշարժ պահպանությունից, ամեն մի հանդատացող հեծյալ զորամաս, առանձնապես խոշորը, պետք և հակառակորդի կողմն ուղարկել ելի հետախույզություն, վերը հանդիսանում և ամենայնով պահապանությունը:

Հեծելապորտում անշարժ պահպանությունը ծառայություն և կատարում ճիշտ այն հիմունքներով, ինչ վեր հետևակում:


Բայց այստեղ ամեկամեկում են ելի՝ ձիերն
և նրանց խնամքը: Պահապան ուղեկա-
լում հեծեկակաները ծառայություն են
կատարում հետևակ շարքում. ձիերն
յետ են տարվում թաքնված տեղ և ուղե-
կալից վոչ հեռու: Անհրաժեշտ և մեծ ու-
շադրություն դարձնել ձիերի քողարկման
վրա:

Դաշտային պահակները նաև ծա-
ռայություն կատարում են նաև հետեվակ
շարքում, ընդվորում ձիերը սովորաբար
թողնում են ուղեկալում: Իսկ առանձին
դաշտային պահակները, այսինքն նրանք
վորոնք դրվում են ուղղակի գնդից, և
վոչ թե պահապան ուղեկալից, ձիերը
պահում են իրենց մոտը, բայց ծածկված
և լավ քողարկված տեղում: Դաշտային
պահակից կամ անմիջապես զորամասից
դրված պահպանական պոստը, դրվում և
նույնպես հետևակ:

Պատերազմում անշարժ պահպանու-
թյան մեջ ծառայություն ձիշտ կատա-
րում են այնքան կարևոր և, մեր ամենա-
շեշին վրիպումն և անճշտությունը շատ
ծանր հետևանքներ են բերում իրենց հետ,

վաշ միայն իրենց պահպանությունն ծա-
ռայություն կատարողներին համար, այլև
հանգստացող զորքերին համար: Հետևա-
կին և հեծեկազորին կարմիր բանակայիննե-
րը, վորոնք պատերազմի ժամանակ հա-
ճախ լինում են անշարժ պահպանությու-
նում, պետք և իրենց պարզ պատկերաց-
նեն սմբողջ պատասխանատվությունը,
վորը նրանց վրա յի գրվում անշարժ
պահպանության ծառայությունը կատա-
րելու ժամանակ:

Դաշտային պահակի ծառայությունը
չառ պատասխանատու յի վորովհետև
նրա ճիշտ կատարելուց և կախված չառ
հաճախ զորամասի կյանքն և զոյությու-
նը, վորին հանգիստը պահպանում և դաշ-
տային պահակը: Ուստի և յուրաքան-
չյուր կարմիր բանակային պետք և հառ-
տատուն գիտենա իր պարտականություն-
ները դաշտային պահակում ծառայու-
թյուն կատարած ժամանակ և խորանա
գիտակցաբար կատարելու նրանք՝ ճիշտ և
ուշադրությամբ:






ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038172

61643

374



4164 15 400.